ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախագծով առաջարկվող կարգավորումը.

Նախագծի նպատակը ընթերցանության, կրթվածության և հրատարակչական գործունեության խթանումն ու ամրապնդումն է

ՀՀ-ում, որը կնպաստի ՀՀ-ում գործունոթյուն իրականացնող հրատարակչական գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների համար ընդհանուր մրցակցության պայմանների բարելավմանը:

ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «**Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը**:»

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի **կրթության** իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ « Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ **տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը**:»

Անհնարին է չնկատել օրգանական կապը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ՀՀ Սահմանադրության և գրքի ու գրականության միջև, քանի որ գիրքն ու գրականությունը կրթում են մարդուն, դարձնում նրան ավելի տեղեկացված և իրազեկված, ինչի ամրապնդմանն էլ ուղված է սույն նախագիծը:

Պետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը կարգավորող ոլորտների թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, երկրում ներդրումների ծավալի մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խթան կարող է դառնալ գործարարությամբ զբաղվելու և ներդրումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ինչին համապատասխան նաև գործարար ոլորտում պետական անհարկի միջամտության կրճատումը: Օտարերկրյա ներդրումների տեսանկյունից, բացի քաղաքական, գործարարական և ներդրումային միջավայրի ներդաշնակեցումից, անհրաժեշտություն է նաև ներդրողների շահերի պաշտպանության մակարդակի հետևողական և կայուն աճը:

Գործարար միջավայրի բարելավման ուղղություններից հարկային կոշտ քաղաքականության թուլացումը, այդ թվում՝ հարկերի դրույքաչափերի կրճատումը և առանձին հարկերի վերացումը, հարկերի տարբերակված դրույքաչափերի կիրառումը, մաքսավճարների կրճատումը և առանձին մաքսավճարների վերացումը, հարկային վարչարարության պարզեցումը և թափանցիկության բարձրացումը, մրցակցային միջավայրի բարելավումը:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով: ԱԱՀ–ն, հանդիսանալով պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման գլխավոր աղբյուր, բացի բուն ֆիսկալային գործառույթից, ունի նաև ռեգուլատիվ գործառույթ: Հանդիսանալով անուղղակի հարկ և ներառվելով ապրանքի գնագոյացման մեջ՝ այն ապրանքի շուկայական առաջարկի ու պահանջարկի ձևավորման կարևոր գործոն է և անմիջականորեն ազդում է արտադրության ու իրացման ծավալների վրա, և որպես հետևանք նաև երկրի սոցիալ–տնտեսական վիճակի վրա:

Գրքերի տպագրության և առհասարակ հրատարակչության ոլորտում ԱԱՀ-ին առնչվող կարևորագույն բարեփոխումներից մեկը կարող է համարվել ԱԱՀ-ից ազատումը, ինչը կարող է էականորեն նպաստել գրքերի արտադրության և տպագրության ծավալների ընդլայնմանը և տպագիր կամ էլեկտրոնային գրականության ընդհանուր գների նվազեցմանը: Գրքերի տպագրության և օտարման համար ԱԱՀ-ից ազատումը կնպաստի նաև պետության սոցիալ-տնտեսական իրավիճակի էական բարելավմանը և վճարունակ պահանջարկի ընդլայնմանը, իսկ ակնկալվող բյուջետային մուտքերի նվազեցումը հնարավոր կլինի փոխհատուցել շնորհիվ այլ հարկային մուտքերի ավելացման, ինչպես նաև անարդյունավետ բյուջետային ծախսերի կրճատման:

Մասնավորապես, գների իջեցման շնորհիվ աճող պահանջարկը կարող է ավելացնել նաև արտադրության ծավալները, ինչը կարող է հանգեցնել արտադրողների ֆինանսական վիճակի բարելավման, շահույթի աճի, աշխատատեղերի և դրան համապատասխան եկամտահարկի ավելացման, ինչով էլ պայմանավորված ընդհանուր պետական բյուջե մուտքագրվող հարկերի չափը:

Հրատարակչական գործի զարգացումը հրատարակչական և տեղեկատվական ոլորտում յուրաքանչյուր պետության արդյունավետ քաղաքականության նպատակներից է: Գրքային արտադրանքի միջոցով է նաև իրականացվում ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումը, բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորումը, բնակչության՝ կրթություն և տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքների ապահովումը, գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Պետության խնդիրներից է նաև գրահրատարակչական շուկայում հավասար մրցակցության ապահովումը, ինչով և պայմանավորված է ոլորտի տարբեր շերտերի զարգացման խթանումը, իսկ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերն ուղղակիորեն ազդում են գործարարների գործունեության վրա:

Նախագծով առաջարկվում է նաև ԱԱՀ-ից ազատել դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, գրականության, գրքերի, դասագրքերի, ձեռնարկների, խնդրագրքերի և ժողովածուների, ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների և այլ ցանկացած տեսակի գրականության, ինչպես նաև թերթերի և ամսագրերի տպագրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումը:

Նախագծի քննարկումը շահառու սուբյեկտների հետ

Նախագիծը կազմվել և համատեղ կարգով քննարկվել է ՀՀ-ում հրատարակչական գործունեություն իրականացնող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների հետ:

Միջազգային փորձ.

Հրատարակիչների միջազգային ասոցիացիացիայի 2015թ զեկույցի համաձայն՝ 30-ից ավելի պետություններում, ինչպիսիք են, օրինակ, Կանադան, Լիբանանը[1], Հորդանանը, Մեծ Բրիտանիան[2], Ուկրաինան[3], Նորվեգիան[4], Հարավային Ամերիկայի երկրները, տպագրված գրքերի համար

---

[1] Տե՛ս՝ http://www.databank.com.lb/docs/vat.pdf

[2] Տե՛ս՝ Value Added Tax Act 1994 (UK), https://socialsciences.exeter.ac.uk/media/universityofexeter/collegeofsocialsciencesandinternationalstudies/politics/research/statorg/uk/party/Tax_Law-Value_Added_Tax_Act_1994.pdf :

[3] Տե՛ս՝ https://www.wto.org/english/thewto_e/acc_e/ukr_e/WTACCUKR143A5_LEG_1.pdf

սահմանվում է 0% ավելացված արժեքի հարկ: Մի շարք այլ երկրներում էլ, ինչպիսիք են, օրինակ, Սինգապուրը, Ճապոնիան, Թայլանդը, Իռլանդիան[5], Բելգիան, Կիպրոսը, տպագրված գրքերի իրացման համար սահմանված է ավելացված արժեքի հարկի[6] արտոնություն՝ դրա նվազեցման դրույքաչափի կիրառման միջոցով: Ռուսաստանում հրատարակիչների համար արտոնյալ պայմաններ են սահմանվել 2020թ-ից, որով հրատարակչական գործունեության դեպքում ԱԱՀ-ն 10% է, Թուրքիայում գրքերի համար ավելացված արժեքի հարկը սահմանված է 8%, Վրաստանում և Ադրբեջանում նույնպես հարկային արտոնյալ պայմաններ են սահմանված հրատարակիչների համար:

Բացի այդ, ԵՄ 2018թ հոկտեմբերի 2-ի փոփոխություններից հետո ԵՄ անդամ մի շարք պետություններ գնացել են ձեռագիր, տպագիր և աուդիոգրքերի համար նախատեսված ԱԱՀ-ի նվազեցման ճանապարհով, իսկ արդեն 2019 թվականի սեպտեմբերին Լեհաստանում ստորագրվել, իսկ 01.11.2019թ ուժի մեջ է մտել օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որով նվազեցվել է էլեկտրոնային գրքերի և աուդիոգրքերի ԱԱՀ-ն 23%-ից մինչև 5%[7]: 2020թ հունվարից Սլովենիայում գրքերի իրացման հետ կապված ԱԱՀ-ն 22%-ից իջավ 9.5%:

Նախագծի ընդունման նպատակը.

Նախագծով առաջարկվող լրացումների իրականացման բուն նպատակը պայմանավորված է պետությունում հրատարակչական գործի զարգացման, բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորման, տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման, գործարար միջավայրի բարելավման, փոքր և միջին բիզնեսի շահերի պաշտպանության, պետության սոցիալ-տնտեսական վիճակի էական բարելավման և վճարունակ պահանջարկի ընդլայնման անհրաժեշտությամբ, որի առաջնային հետևանքը կլինի ընթերասեր և առավել կթրված հասարակության ձևավորումը:

---

[4] Տե՛ս՝ VAT act of 19 June 2009 no. 58 – Unofficial English translation Updated May 2014 (Norway), https://www.skatteetaten.no/globalassets/bedrift-og-organisasjon/avgifter/merverdiavgift/refusjon-av-mva---avgiftsinfo/vat-act---oversatt-versjon-av-merverdiavgiftsloven-updatet-may-2014.pdf

[5] Տե՛ս՝ Value-added tax consolidation act 2010 (Ireland), http://www.irishstatutebook.ie/eli/2010/act/31/enacted/en/pdf

[6] Տե՛ս https://www.internationalpublishers.org/copyright-news-blog/317-global-vat-gst-on-books-and-e-books

[7] Տե՛ս https://publishingperspectives.com/2019/09/poland-approves-reduction-digital-vat-rates-cutting-from-23-to-5-percent/